

ԽԱՉ ՇՂԹԱՅԱԿՐԻ



Դեռ պատանի երբ եկայ
 Զինուորուելու այս Ուխտին,
 Տեսայ կախուած մեկուսի
 Պղինձէ խաչ մը մթին,
 Աւանդատան մերկ պատին:
 Ինձ պատմեցին մեր հիններ,
 Թէ խաչն այդ կախ էր ինկեր
 Պարանոցէն այն մարդուն
 Որ Շիրուանցի կը կոչուէր:
 Խաչն այդ տխուր, խաչն այդ սեւ,
 Իրեն եղած էր ընկեր
 Տառապանքի օրերուն,
 Այս Աթոռի սերտ սիրոյն:
 Հայուն երկիր, հայուն սիրտ,
 Բացուած դարպաս մը ինչպէս
 Իր զերազանց հոգիին:

.
 Ու այդ օրէն ան դարձաւ
 Այս Աթոռին սրբազան
 Մեծ պատերիարք վշտակիր
 Երանաշնորհ ՇՂԹԱՅԱԿՐԻ:
 Սուրբ վերցաւ այս Տունէն,
 Օտարներու լուծն անարգ,
 Պարտքին վիշապը վայրագ,
 Կը նահանջէր կորակոր:



Երկու լրման դարերու
 Անշրպետին ղէմ հսկայ,
 Հոգիս բացուած է հիմա
 Քու հոգիիդ ղէմ ղիմաց:
 Պարմաններուն մեր փոքրիկ
 Մենք կը պատմենք քաղցրօրէն
 Պատէն կախուած մեծ խաչին
 Խորհուրդն անանց ու խորին:



Դարեր կ'անցնին, բայց մարդիկ
 Աչք սեւեռած այդ խոնարհ
 Աստուածային նշանին,
 Վիզէդ՝ օր մը ինկած կախ,
 Իբրեւ կտակ մը նորոգ
 Բոլոր անոնց՝ իր կուզան
 Այս տան օրհնէնքն վայելել: